ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2024 թ. հունվարի 24-ի թիվ 5 նիստի

Մինչ օրակարգի հաստատումը գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Դ. Վ. Պետրոսյանը նախօրեին դիմել է ԵՊՀ ռեկտորին՝ սեփական դիմումի համաձայն իրեն ԵՊՀ գիտխորհրդի անդամի պարտականություններից ազատելու խնդրանքով: Հաշվի առնելով այդ հանգամանքը Ն. Մարտիրոսյանը առաջարկեց ներառել նաև ֆակուլտետից ԵՊՀ գիտխորհրդի նոր անդամի ընտրության հարցը և այդ հարցի հավելումով հաստատել նիստի օրակարգը:

Խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց օրակարգը՝ առաջարկված փոփոխությամբ:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Ժուռնալիստիկայի ֆակուլտետից ԵՊՀ գիտական խորհրդի անդամի ընտրության հարցը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահամյան:*

Ելույթ ունեցողներն առաջադրեցին ֆակուլտետի գրասենյակի ղեկավար/դեկանի տեղակալ, բան. գիտ թեկնածու, դոցենտ Անահիտ Ռուբենի Մենեմշյանի թեկնածությունը:

Այլ առաջարկներ չեղան:

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանն առաջարկեց անցկացնել բաց քվեարկություն:

Խորհուրդը միաձայն համաձայնեց:

Անցկացվեց բաց քվեարկություն:

Նիստին ներկա գիտխորհրդի բոլոր անդամները «կողմ» քվերակեցին Ա. Ռ. Մենեմշյանի թեկնածությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝ Ա. Ռ. Մենեմշյանին համարել ընտրված և դիմել ԵՊՀ ռեկտորին՝ Ա. Ռ. Մենեմշյանին ԵՊՀ գիտխորհրդում ընդգրկելու խնդրանքով:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի օգնականի ներգրավման կարգի, օգնականի թեկնածուին ներկայացվող պահանջների և գործառույթների մասին Ն. Մարտիրոսյանի հաղորդումը:

Խորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ 2023 թ. նոյեմբերի 8-ին ԵՊՀ ռեկտորի հրամանով հաստատվել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում պրոֆեսորադասախոսական կազմի օգնականի ներգրավելու կարգը, ներկայացվող պահանջները և գործառույթները:

Համաձայն հրամանի՝ կարգը կիրառության մեջ է դրվում 2023/2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից և գործում է մինչև ուսումնական տարվա ավարտը:

Ն. Մարտիրոսյանը հայտնեց, որ պրոֆեսորի օգնականի համար (հասարակական հիմունքներով) դիմել է Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի հեռակա ասպիրանտ Լիանա Ներսեսի Մարտիրոսյանը:

Ամբիոնը քննարկել է հարցը և երաշխավորությամբ դիմել ֆակուլտետի գիտխորհրդին՝ համապատասխան որոշում ստանալու խնդրանքով:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Դ. Վ. Պետրոսյան, Լ. Կ. Սայադյան, Զ. Զ. Սարգսյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանն առաջարկեց անցկացնել բաց քվեարկություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օգնականի տեղի համար այլ թեկնածու չկա: Խորհուրդը միաձայն «կողմ» քվեարկեց Լ. Ն. Մարտիրոսյանի թեկնածությանը:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ.</u>- Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝ Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի հեռակա ասպիրանտ Լիանա Ներսեսի Մարտիրոսյանին նշանակել պրոֆեսորի օգնական մինչև ուսումնական տարվա ավարտը:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ» մագիստրոսի կրթական ծրագրի հեռակա ուսուցման ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին հաղորդում:

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ ծրագրի ղեկավար Ա. Ավետիսյանը հարգելի պատճառով բացակա է, ուստի ինքը կներկայացնի անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ամփոփիչ ատեստավորումը կայացել է ս/թ հունվարի 17-ին, մասնակցել են երեք մագիստրոս: Նրանցից երկուսը ստացել են «գերազանց», մեկը՝ «լավ» գնահատական: Հանձնաժողովը տպավորված է եղել ներկայացման որակով, իսկ հանձնաժողովի նախագահը հույս է հայտնել, որ գործատուները անպայման կօգտագործեն ԵՊՀ լավագույն շրջանավարտների ներուժը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Դ. Վ. Պետրոսան, Գ. Մ. Աբրահամյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգի և ֆակուլտետում դրա իրականացման ընթացքի մասին Դ. Վ. Պետրոսյանի հաղորդումը:

Դ. Պետրոսյանը նշեց, որ արդյունավետ է հետազոտական բաղադրիչի ներդրումը և ներկայացրեց նախորդ կիսամյակում հետազոտական բաղադրիչ ունեցող շրջանակում իրականացված աշխատանքի առարկաների արդյունքները:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Ն. Ն. Մարտիրոսյան, Գ. Աբրահամյան, Դ. Հ. Ալավերդյան, Ա. Դ. Հակոբյան:*

Ելույթ ունեցողները կարևորեցին հետազոտական բաղադրիչի ներմուծումը, սակայն մատնանշեցին դեռևս առկա մի քանի մտահոգիչ իրողություն: Քիչ չեն դեպքերը, երբ զգալի է ինքնուրույնության պակասը, առկա է պարզունակություն, ոչ գիտական շարադրանք:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ և հեռակա ուսուցման 5-րդ կուրսերի ուսանողների պրակտիկայի կազմակերպման մասին Դ. Պետրոսյանի և Գ. Աբրահամյանի հաղորդումը:

Նրանք փաստեցին, որ ընթացիկ ուսումնական տարում նախատեսված պրակտիկայի կազմակերպման ընթացքը ամփոփիչ փուլում է, կատարվել են անհրաժեշտ ճշգրտումներ: Դ. Պետրոսյանը մատնանշեց մի քանի խնդիրներ և դժվարություններ պրակտիկայի առավել արդյունավետ կազմակերպման գործընթացում:

Ն. Մարտիրոսյանը հավելեց, որ չնայած խնդիրներին, այդուհանդերձ կան լրատվամիջոցներ, որոնք ոչ միայն սիրով են ընդունում մեր ուսանողներին և պատրաստ են աշխատել նրանց հետ, այլև եթեր են տրամադրում, ինչպես Հանրային հեռուստաընկերությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Լ. Կ. Սայադյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ա. Դ. Հակոբյան, Ա. Ա. Ավետիսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- 2023/2024 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Դ. Հակոբյան, Ա. Ա. Ավետիսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2023/24 ուստարվա 2-րդ կիսամյակում Ժուռնալիստիկայի ֆակուլտետում անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների թեկնածությունները վերահաստատել.

Եղիազարյան Արուսյակ Հրայրի 4-րդ կուրս - «Արտաշես Քալանթարյան» կրթաթոշակ

Հարությունյան Օֆելյա Մկրտչի 4-րդ կուրս - «Հովհաննես Ադամյան» կրթաթոշակ

Հակոբյան Լուսինե Արտակի 4-րդ կուրս - «Հարություն Շմավոնյան» կրթաթոշակ:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ